

## 05.03.2026 թ. «Նախիջևանի միջադեպը». նպատակները և դերակատարները ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 10.03.2026 թ.<sup>1</sup>

Անտրագիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է 05.03.2026 թ. Նախիջևանի օդանավակայանի տարածքում տեղի ունեցած միջադեպը՝ կապված անօդաչու թռչող սարքի (ԱԹՍ) հարձակման հետ, որը գնահատվում է որպես Մերձավոր Արևելքում անվտանգության ճարտարապետության որակական փոփոխության ներուճակ սպառնալիք: Հետազոտության շրջանակներում իրականացվում է Ադրբեջանի և Իրանի արձագանքների վերլուծություն, կասկածի տակ է դրվում հարձակմանը Թեհրանի մասնակցության պաշտոնական վարկածը և առաջ քաշվում «ուրիշի դրոշի ներքո» գործողության վարկածը: Հատուկ ուշադրություն է դարձվում Նախիջևանի էքսկլավը որպես Անկարայի պատասխանատվության գոտի օգտագործելու միջոցով Թուրքիայի Հանրապետությանն Իրանի Իսլամական Հանրապետության հետ ուղղակի առձևակարգման հարկադրելու փորձերին: Աշխարհում հիմնավորվում է թուրքական ղեկավարության զուսպ դիրքորոշումը՝ ուղղված հակամարտության մեջ ներգրավման կանխմանը, որը կարող է աղետալի աշխարհաքաղաքական հետևանքներ ունենալ տարածաշրջանային դերակատարների համար:

**Քանալի բառեր.** Նախիջևանի միջադեպ, Իրան, Ադրբեջան, Թուրքիա, գործողություն «ուրիշի դրոշի ներքո», տարածաշրջանային անվտանգություն, ԻՀՊԿ, սրացում, աշխարհաքաղաքական սադրանք:

### 1. Միջադեպն ու տարածաշրջանային դերակատարների արձագանքը

Դեպի Նախիջևանի օդանավակայանի տարածք անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ 05.03.2026 թ. առավոտյան տեղի ունեցած միջադեպը կարող է ուժերի դասավորվածության արմատական փոփոխությունների հանգեցնել մերձավորարևելյան հակամարտության համատեքստում և ընդլայնել դրա տարածման աշխարհագրությունը:

Ադրբեջանի Հանրապետությունը տեղի ունեցած հարձակման կապակցությամբ պաշտոնական բողոք է հայտնել Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ ներողություն խնդրելու պահանջ ներկայացնելով վերջնագրի տեսքով, ինչպես նաև լիարժեք մարտական պատրաստության վիճակի բերելով իր զինված ուժերը: Իր հերթին, ԻՀՊԿ պաշտոնատար անձինք, մասնավորապես՝ ԱԳՆ-ը, հայտարարել են, որ իրանական կողմն առնչություն չունի այս միջադեպին՝ այն համարելով երրորդ կողմի նախաձեռնություն, որն իրականացվել է սադրիչ նպատակներով: Իրանի ռազմական կառույցները նույնպես պաշտոնական պատասխանատվություն չեն ստանձնել տեղի ունեցածի համար, ի տարբերություն այն գործնական իրողության, որ նկատվել է Պարսից ծոցի երկրների ռազմական և քաղաքացիական ենթակառուցվածքների վրա հարձակումներից հետո: Այնուամենայնիվ, տեղեկատվական տիրույթում արձանագրվել են Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) հրամանատարության անանուն ներկայացուցիչների կողմից «Նախիջևանի միջադեպը» որպես Թեհրանի պատասխան

<sup>1</sup> Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 09.03.2026 թ.:



միջոցներ ձեռնարկել: Իսրայելցի տարբեր մակարդակի քաղաքական գործիչներ և վերլուծաբաններ ՉԼՄ-ներում աշխուժորեն քննարկում են ադրբեջանա-իրանական վերահաս պատերազմի թեման՝ այն մեկնաբանելով որպես անխուսափելիություն: Իսրայելական որոշ ՉԼՄ-ներ, հղում անելով հրեական պետության կառավարության և ուժային կառույցների աղբյուրներին, արդեն հաղորդում են Իրանի հյուսիս ցամաքային ներխուժմանը Բաքվի իբր նախապատրաստվելու մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անկախ փորձագետները մատնանշում են Նախիջևանում տեղի ունեցած միջադեպին ամերիկա-իսրայելական երկյակի մասնակցության մեծ հավանականությունը: Ընդ որում՝ ընդգծվում է, որ նման «սադրանքի» զուտ տեխնիկական իրականացումն զգալի դժվարություններ չէր առաջացնի Իսրայելի պետության հետախուզական ծառայությունների և զինված ուժերի համար: Որպես պատկերավորում՝ բերվում են, այսպես կոչված, «ուրիշի դրոշի ներքո» գործողությունների օրինակներ, որոնք ենթադրաբար կազմակերպվել են Իսրայելի կողմից ծոցի արաբական միապետություններում՝ «իրանական վարչախմբի» նկատմամբ նրանց թշնամանքը սաստկացնելու համար: Փորձագիտական հանրության գնահատականներով՝ հենց Իսրայելի և ԱՄՆ-ի խմբավորումն է առավել շահագրգռված Ադրբեջանի և նրա առանցքային դաշնակից Թուրքիայի՝ Իրանի հետ բացահայտ ռազմական դիմակայությամբ: Մասնավորապես, մեծանում է ադրբեջանական գործոնի նշանակությունը հակաիրանական արշավին Իրաքում և Իրանում քրդական կազմավորումներին ընդգրկելու Վաշինգտոնի ոչ այնքան հաջող նախաձեռնության համատեքստում, ինչն իր հերթին կարող էր խթանել նրանց աշխուժացումն ու Թուրքիայի հնարավոր միջամտությունն Իրանի ներքին գործերին: Հետևաբար, Նախիջևանին հասցված սադրիչ հարվածը ենթադրաբար կարող էր իրականացվել Անկարային Թեհրանի հետ հակամարտության մղելու նպատակով՝ այս անգամ գործի դնելով ադրբեջանական գործոնը:

Այս լույսի ներքո ուշադրության է արժանի այն փաստը, որ սադրանքն իրականացվել է ոչ թե Իրանի հետ սահմանակից «մայրցամաքային» Ադրբեջանի գոտիներից մեկում, որտեղ Թեհրանն ավանդաբար արձանագրել է իսրայելական հատուկ ծառայությունների հատուկ ակտիվությունը, այլ հենց նախիջևանյան արտատարածքում, որի իբրև անվտանգության երաշխավոր ավելի քան մեկ դար հանդես է գալիս Թուրքիան՝ համաձայն Մոսկվայի (16.03.1921 թ.) և Կարսի (13.10.1921 թ.) պայմանագրերի: Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, որ սադրանքի նախաձեռնողները հույսը դրել են ոչ միայն Ադրբեջանի անհապաղ և կոշտ արձագանքի վրա՝ ի պատասխան ԻՀԴԿ-ի ենթադրյալ թշնամական գործողությունների, այլև հակամարտության մեջ Թուրքիայի բռնի ներգրավման վրա (ներառյալ Իրանի հյուսիս-արևմուտքում ցամաքային գործողությունը)՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը ցանկացած ոտնձգությունից պաշտպանելու իր ուղղակի պարտավորությունները կատարելու պատրվակով:

#### 4. Անկարայի և Բաքվի դիվանագիտական զսպվածությունը

Ակնհայտ է, որ Անկարայում, որն աշխուժորեն հնարավորություններ է փնտրում խուսափելու (գոնե այս փուլում) Իրանի հետ բախումից, բացահայտել են նախիջևանյան սադրանքի նպատակներն ու հեղինակներին: Անկարան համեմատաբար զուսպ է արձագանքել 04.03.2026 թ. իր օդային տարածքում խոցված ենթադրաբար իրանական բալիստիկ հրթիռի հետ կապված միջադեպին: Նաև թուրքական իշխանությունները բավական նրբանկատ են վերաբերվել Նախիջևանի միջադեպին՝ սահմանափակվելով դաշնակից Ադրբեջանին անվերապահ ռազմաքաղաքական աջակցության հավաստիացումներով և Թեհրանի հասցեին հերթական նախազգուշացմամբ: Այնուամենայնիվ, գործնական հարթությունում Անկարան դեռևս չի դիմում այնպիսի միջոցների, որոնք վկայում են Իրանի հետ հարաբերությունները սրելու պատրաստակամության մասին: Ամենայն հավանականությամբ, նույն մարտավարությունը Թուրքիան խորհուրդ է տալիս նաև դաշնակից Ադրբեջանին: Նախիջևանի միջադեպից հետո օրվա ավարտին Բաքուն բանակը լիարժեք մարտական պատրաստության էր բերել, նախաձեռնել Իրանում իր դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմի տարհանման գործընթացը, փակել իրանական սահմանը և աննախադեպ բարձրացրել առճակատման հռետորաբանության աստիճանը: Սակայն Ռ. Թ. Էրդողանի և Ի. Ալիևի հեռախոսազրույցից հետո վերջինիս ռազմատենչ հռետորաբանությունը նկատելիորեն թուլացել է: Ընդ որում, մարտի 6-7-ն ադրբեջանական լրատվամիջոցներն արդեն «գլխավոր» լուրերից հանել են Նախիջևանի թեման, ինչպես նաև գործնականում դադարել Թեհրանին ուղղակիորեն մեղադրել Ադրբեջանի դեմ ագրեսիայի մեջ: Հավանական է, որ բացի խորհուրդներից, թուրքական կողմը կարող էր նաև ադրբեջանական իշխանություններին տրամադրել որոշ տեղեկություններ, որոնք կասկածի տակ են դնում նախիջևանյան հարձակման «իրանական հերթի» մասին պաշտոնական վարկածի միանշանակ լինելը:

#### 5. Ծուղակի մեջ ընկնելու ռիսկերը

Թուրքիան ձգտում է շրջանցել իրանական օրակարգի «ծուղակը»՝ գիտակցելով հակամարտությանն ուղղակի միջամտության գոյութենական սպառնալիքը: Հասկանալով, որ Իրանի մասնատումը սեփական սահմանների ապակայունացման և արևմտյան տերությունների կողմից «Մեծ Քրդստանի» ստեղծման նախազգի վերսկսման վտանգ է պարունակում, Անկարան բացառիկ զգուշություն է ցուցաբերում: Այս փուլում Իրանի հետ ռազմական դիմակայության մեջ Թուրքիայի և Ադրբեջանի ուղղակի ներգրավումը գնահատվում է որպես արկածախնդրություն, որի հետևանքները կարող են աղետալի լինել տարածաշրջանային անվտանգության համար: